ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-2-Ե-9284

«02» նոյեմբերի 2026թ.

«ՄՈԴԵՌԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ
(Հասցե՝ ք. Երևան, Վրացական 7, բն. 8)
«ՄՄՄ ՏԵԽ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ
(Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 26/11)

Հարգելի՛ մասնակիցներ,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար տոներների, տոներային քարտրիջների և չիպային քարտերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/17» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«ՄՈԴԵՌԻ» ՍՊ ընկերություն.

Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ Հավելված N 1-ը, կազմված է Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան, մասնավորապես՝ «ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը» դաշտում լրացված է ընկերության հայերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը:

«ՄՄՄ ՏԵԽ» ՍՊ ընկերություն.

4-րդ չափաբաժնի մասով ընկերության կողմից eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերով

սահմանված՝ «Տուփերի վրա պետք է լինի. 1. նշագրում՝ քարտրիջի տեսակի, տպվող էջերի քանակի և արտադրման տարեթվի վերաբերյալ» նախադասությունում բացակայում են «և արտադրման տարեթվի» բառերը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի նոյեմբերի 03-ը ներառյալ Համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Հարգանքով,

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

ԱՐԾԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/17» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Մ.Հայրապետյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788